ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/221

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2021թ. թիվ 26/26-1/12963-2021 գրությամբ «Վոլտ 1999» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի 09.08.2021թ. թիվ ՍՉԱՄ-957 գրության հիման վրա, 13.08.2021թ. թիվ 26/26-1/12963-2021 գրությամբ նախաձեռնել է «Վոլտ 1999» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Վոլտ 1999» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վոլտ 1999» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Վոլտ 1999» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/221 ընթացակարգի շրջանակներում 20.08.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.08.2021թ. թիվ ՍՉԱՄ-957 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով հայտնում եմ, որ «Վոլտ 1999» ՍՊԸ-ն, վերջինիս և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի միջև 2021 թվականի հունիսի 30-ին կնքված ապրանքների մատակարարման թիվ ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2» պայմանագրի շրջանակներում «Վոլտ 1999» ՍՊԸ-ի կողմից խախտել է թիվ 1 հավելվածով սահմանված մատակարարման ժամկետը և չի մատակարարել վերոնշյալ պայմանագրով սահմանված ապրանքները, ինչի արդյունքում «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից թիվ «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2» պայմանագիրը միակողմանի լուծվել է»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/221 ընթացակարգի շրջանակներում 20.08.2021թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/221 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/221 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի և «Վոլտ 1999» ՍՊԸ-ի միջև 30.06.2021թ. կնքվել է թիվ «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2» ծածկագրով «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով

սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

3. «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն «Վոլտ 1999» ՍՊԸ-ին ուղղված 04.08.2021թ. թիվ ՍՉԱՄ-940 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի և «Վոլտ 1999» ՍՊԸ-ի միջև 2021թ. հունիսի 30-ին կնքված թիվ ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2 պայմանագրի շրջանակներում «Վոլտ 1999» ՍՊԸ-ն ստանձնել է պարտավորություն պայմանագիրը կնքվելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով սահմանված ապրանքը, որը «Վոլտ 1999» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել, խախտվել է նաև վերոնշյալ պայմանագրի 2.1.1 կետով սահմանված մատակարարման ժամկետի խախտման 10 (տաս) օրյա ժամանակահատվածը:

Թիվ ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2 պայմանագրի 2.1.7 կետով Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը և 2.1.7.1 կետի բ) ենթակետով Վաճառողի կողմից պայմանագրի էական խախտում է համարվում ապրանքի մատակարարման ժամկետները 10 (տաս) օրից ավելի խախտելը:

Հաշվի առնելով, որ «Վոլտ 1999» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Վոլտ 1999» ՍՊԸ-ի հետ 2021թ. հունիսի 30-ին կնքած թիվ ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: (...)»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 04.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.08.2021թ. թիվ 26/26-1/12963-2021 գրությունը, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի 09.08.2021թ. թիվ ՍՉԱՄ-957 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի և «Վոլտ 1999» ՍՊԸ-ի միջև 30.06.2021թ. կնքվել է թիվ «ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2» ծածկագրով «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

«Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն «Վոլտ 1999» ՍՊԸ-ին ուղղված 04.08.2021թ. թիվ ՍՉԱՄ-940 ծանուցմամբ հայտնել է հետևյալը.

««Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի և «Վոլտ 1999» ՍՊԸ-ի միջև 2021թ. հունիսի 30-ին կնքված թիվ ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2 պայմանագրի շրջանակներում «Վոլտ 1999» ՍՊԸ-ն ստանձնել է պարտավորություն պայմանագիրը կնքվելու օրվանից 20 օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրով սահմանված ապրանքը, որը «Վոլտ 1999» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել, խախտվել

է նաև վերոնշյալ պայմանագրի 2.1.1 կետով սահմանված մատակարարման ժամկետի խախտման 10 (տաս) օրյա ժամանակահատվածը:

Թիվ ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2 պայմանագրի 2.1.7 կետով Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը և 2.1.7.1 կետի բ) ենթակետով Վաճառողի կողմից պայմանագրի էական խախտում է համարվում ապրանքի մատակարարման ժամկետները 10 (տաս) օրից ավելի խախտելը:

Հաշվի առնելով, որ «Վոլտ 1999» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով ստանձնած պարտավորությունները, «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Վոլտ 1999» ՍՊԸ-ի հետ 2021թ. հունիսի 30-ին կնքած թիվ ՍՉԱՄ-ԳՀԱՊՁԲ-21/4-2 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները: (...)»:

<u>Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 04.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրերի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>10 օրից ավելի</u>,***

Այսպիսով՝ համաձայն գործում առկա նյութերի՝ արձանագրում եմ, որ «Վոլտ 1999» ՍՊԸ-ն իր և «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի միջև 30.06.2021թ. կնքված Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարման

ժամկետները խախտել է 10 օրից ավելի, ինչի արդյունքում Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են «Վոլտ 1999» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.08.2021թ. թիվ 26/26-1/12963-2021 գրությամբ «Վոլտ 1999» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վոլտ 1999» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**